

ԱՔԵՏԱՐԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՊԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՍՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՅՈՒՆՈՒԱՐ 4. 1877.

ԹԻՒ 4.



ՈՒՂՏԸ ՏԱՏ ԱՐԱԿ ԿԵՐՔԱՅ

ԱՆԱՊԱՏԻ ՆԱԻ

Վերի պատկերին մէջ տեսնուած ուղտը շատ արագ կ'երթայ, որը երբ տուն ժամ կրնայ քայլել: Արաբիոյ անապատին բնակչաց համար ուղտը գրեթէ ամէն բան է: Անոր կախը կը խմուի, միտը կ'ուտուի, բուրդէն՝ զգեստ, և մարմէն՝ ոտքիաման, թամբ, համետ և տիկ կը շինուի: Ճանապարհորդք, երբ ճամբան քնանալ կ'ուզեն, ուղտն իրենց բարձ կ'ընեն: Արաբացիք պատերազմի ատեն ուղտերն իրենց յորս կողմը պատի պէս կը շարեն և անոնց միջոցաւ թշնամոյն կապարներէն պահպանուելով կը պատերազմին իրենց

դուալները և ոտացուածքը պաշտպանելու համար: Վերի պատկերն օրինակուած է Հորաս վէրնէ անուն Գաղիացի անուանի պատկերհանին մէկ պատկերէն: Յիշեալ հռչակաւ որ պատկերհանը ուղտեր տեսնելու և անոնց պատկերը քաշելու համար իր հայրենիքը թողլով բաւական ատեն Ալճերի բնակեցաւ:

ԱԶԳԻ ՎՐԱՅ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

«Կը փափաքիմ որ ինձ ըսես ինչ որ վարժուէին ձեզի ըսաւ աչքի վրայով:»
— «Վարժուէին մեզի ցուցուց թէ ա-

մեն գոյն աչքդ եղեցիկ և զարմանալի է:»

— «Աչքը հասարակ բան մըն է. ամէն մարդու վրայ կայ. Ի՞նչպէս զարմանալի է:»

— «Թէպէտ հասարակ բան մըն է աչքը, և ամէն մարդու վրայ կը տեսնուի, բայց և այնպէս զարմանալի է: Ես չեմ կրնար ամէն բան ըսել ինչ որ լսեցի աչքի վրայ. քանի մը բան միայն ըսեմ: Նախ սա ըսեմ որ մենք ամբողջ աչքը չենք տեսներ: Աչքը դնդակի պէս կըրը է, և անոր ամենէն փափուկ մասերը որ ներսի կողմն են՝ դուրսէն աղէկ պաշտպանուած են: Ժամացուցի ապակին գիտես: Եթէ քեզի բան մը ըսեմ կը հաւատաս: Ամէն տղայ և ամէն մարդ սր կըրը չէ, աչքերուն մէջ ժամացուցի ապակւոյն նման բարակ և փափուկ մանր ծածկոց մը ունի: Այս ապակւոյն նման ծածկոցը կը պահպանէ աչքը, բայց տեսնելէ չարգելեր:»

— «Ի՞նչ կ'ըսես, աչքը կոպերէն զատ ժամացուցի ապակւոյն նման տրիշ ծածկոց ալ ունի:»

— «Այո՛, կոպերն աչքը գոյելու համար են, և չեն թողուր որ փոշի և մանր ճճիներ մտնեն աչքին մէջ, կոպերը նաեւ յողնած աչքերը հանդ չեցընելու կը ծառայեն:»

— «Ի՞նչ կոպերն աչքը կը հանդ չեցնեն: Ի՞նչպէս կրնան հանդ չեցնել:»

— Երբ աչքերդ յողնած են, և քունդ կուգայ, կոպերդ ինքնին կը գոցուին, և աչքերդ կը հանդ չին բոլոր գիշերը: Բայց աչքի վրայ ուրիշ բաներ ալ ունիմ ըսելու: Ամէն աչքի ճիշդ մէջ տեղը սեւ կէտի նման բան մը կը տեսնես, այս սեւ կէտը բիրն է: Բիրն աչքին ապակեման ծածկոցին ետեւի կողմը բացուած ծակ է, և անկէ կրնաս տեսնել աչքին ներսի գին:»

— «Կապոյտ, սեւ և խաժ աչքերու վրայ բան մը չըսիր:»

— «Հիմա ասոր վրայ պիտի խօսիմ:

Բրին բոլորտիքը եզր մը կայ որ քանի մը գոյն կրնայ ըլլալ: Երբ լոյսը շատ պայծառ է, կրնայ աչքին ֆլաստել, ուստի այն դունաւոր եզրն ամփոփուելով կը փոքրկացնէ բիրբ: Երբ լոյսը կը նուազի, բիրբը դարձեալ կ'ընդարձակուի: ”

— «Աչքին սպիտակուցին վրայ ի՞նչ կրնաս ըսել: ”

— «Վարժուհին ըսաւ թէ, աչքին սպիտակուցը զորաւոր թաղանթ կամ մաշկ է, և աչքին չորս հինգերորդ մասը կը ծածկէ: Արտասուաց համար ալ ըսաւ թէ աչքին վերի կողմը, դուրսի ծայրին մօտ տեղ մը, կը կազմուի, և թէ միշտ խոնաւ կը պահէ աչքը: ”

— «Բայց մենք միշտ չենք արտասուեր: ”


— «Այո, միշտ չենք արտասուեր: Լալու ատեն միայն մարդուն արտասուքը կը վազէ, ուրիշ ատեն արտասուքը բարակ խողովակներէ կը վազէ քիթը, և կը ցամքի շունչէն որ մարդուն քթին ծակերէն կ'անցնի: ”

ԿՈՐՄՈՒԱԾ ՄՈՒԲՃԸ

Տասներեք տարի առաջ նաւ մը կը շինուէր: Գործաւորներէն մին իր մուրճը կորսնցուց: Եթէ գործաւորը խնամով փնտուէր մուրճը, թերեւս պիտի գտներ զայն, սակայն մուրճին կորուստը բանի տեղ չընելով չփնտուեց զայն փութով, և մուրճը մնաց նաւին յատակի տախտակամածին տակը: ”

Նաւը շինուելով սկսաւ ծովուն մէջ երթնելիլ, և երբ ալիքներէն ծփալով մերթ այս դին և մերթ այն դին կը ծռէր, մուրճն ալ նաւին հետ կ'երթար կու գար, և նաւին կողին կը դարձուէր: Այսպէս ստէպ ստէպ զարնուելով վերջապէս նաւին կողի տախտակը ծակեց և մինչև պղծէ թիթեղը հասաւ որով նաւը դուրսէն պատած էր: Նաւավարը իմանալով այս բանը, մուրճը տախտակամածին մէջէն հանեցին: Եթէ նաւը պղծէ թիթեղով պատած չլլար, չուրը նաւին մէջ պիտի մտնէր այն ծակէն զոր մուրճը բացաւ: Պղընձէ թիթեղը պահեց նաւն ընկղմելէ: Մուրճի մը կորուստը որ ի սկզբան փոքր բան մը թուեցաւ՝ տէսէք ի՞նչ մեծ թշուառութեան պատճառ պիտի ըլլար: Փոքր մեղքերն ահա այսպէս են: ”

Մենք զգուշանալու ենք մանաւանդ մեր սրտին մէջ պահուած այն մեղքերէն որ փոքր կը թուին մեզի: Չկայ մարդ մը որ պէտք չունենայ ըսելուս «Ծածուկ մեղքերէն զիս մաքրէ: ”



ՈՅՄԱՆՆԵՐԸ ԲՐՈՅՆ ՎՐԱՅ Կ'ԱՐԱՏՈՒՆԻՑ

ՀՈՎՈՒՆ ՀՈՒՐԸ

Ծննդեան առաւօտ մը Յակոբ որ հովիւ էր՝ բլրոյ մը վրայ կայնած կը նայէր կարմիր ամպերուն որ հարիզոնէն վեր բարձրանալով օդը կը փայլեցնէին: Մինչ Յակոբ իր գաւազանին յեցած ամպոց չարժուումը և ձևերը կը դիտէր, գիւղին եկեղեցոյն զանգակներուն հընչումն անոր ականջին հասաւ: Ոչխարները բլրոյն վրայ ցիր և ցան կ'արածուէին, և Յակոբայ շունն անհանդիստ կը թուէր. որպէս թէ երթալ ոչխարները ժողվելու հրամանին կը սպասէր: ”

Յանկարծ շունը սկսաւ վազել դէպ ի հովիտը, և Յակոբ ձայն մը լսելով որ կը կանչէր «Օղնութեա՛ն հասէք, » գնաց այն կողմն ուստի ձայնը կու գար: ”

Հովիտին մէջ աղքատ տղայ մը կար որ անձրեւէն բոլորովին թրջած էր: Յակոբայ շունը կը սպառնար տղուն վրայ յարձակիլ, և կը հասէր անոր դէմ այնպէս տասը տղայ վախցնելու բաւական էր: Յակոբ իր շունը ետ կանչեց, և հարցուց տղուն, «Գուն՞ով ես, ուստի՞ կու գաս: ”

Տղան ըսաւ. « Յորչափ որ շունդ կը հաչէ և կը սպառնայ վրաս յարձակիլ, չեմ կրնար պատասխանել: ”

Յակոբ տեսաւ որ տղան ցուրտէն կը դողար, ուստի գթալով անոր վրայ իր հիւզը տարաւ զանի, և ըսաւ անոր. « Ալ մի վախնար, հիմա ըսէ ինձի, ուստի կու գաս և ուր կ'երթաս: ”

«Քաղաքէն կու գամ, » ըսաւ տղան, «տեղ մը չեմ երթար, մեռնիլ կ'ուզեմ. » և այս ըսելով սկսաւ լալ: Յակոբ անոր ըսաւ. « Հայրդ ո՛ւր է: ”

Տղան պատասխանեց « Հայր չունիմ: ”

Երբ Յակոբ նորէն հարցուց անոր թէ մայր ալ չունէր, տղան պատասխանեց, « Ոչ: ”

« Ուրեմն ըսաւ Յակոբ, «Գուն՞ ո՛ւր կը կենայիր, և հիմա ինչ պիտի ընես: ”

«Ուրիշ տղոց հետ փողոցը կը կենայի, » ըսաւ տղան, «և հիմա բան մը պիտի չընեմ, մեռնիլ կ'ուզեմ: ”

Երբ Յակոբ անոր ըսաւ. « Ոչ, պիտի չմեռնիս, » տղան պատասխանեց. «

«Ինձի պէս տղայ մը, որ ոչ ուտելիք, ոչ ստակ, ոչ տուն և ոչ ուրիշ բան մը ունի, և անձրեւէն բոլորովին թրջած է, ինչ կրնայ ընել, եթէ ոչ մեռնիլ: ”

(Պետէ Լորտոսի-Է)

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆԻՔ

« Մայրիկ, այս առաւօտ ստակ ունիս: Ես մտոցայ հօրմէս ստակ ուզել անոր դուրս ելլելէն առաջ: Հիմա քանի մը փարայի շատ պէտք ունիմ: ”

« Մարիամ, քսակիս մէջ հինգ փարա անգամ չունիմ: ”

Մարիամի քոյրը, վարդուհի, որ անկէ երկու տարի փոքր էր և ամէն բան բաց ըսել կը սիրէր, այս միջոցին խօսքի խառնուելով, « Մարիամ, չե՞ս՞ գիտէր որ աղքատ ենք, » ըսաւ: ”

Աղջկանց մայրը, Մարիցա տիկին, խնդալով, « Ոչ ոչ, » ըսաւ. « աղքատ չենք. ստակ չունիմ, բայց չորս պատուական գոհար ունիմ: ”

Թագուհի մօրը երեսը նայեցաւ, և անոր իր գեղեցիկ զաւակաց վրայ ուշադրութեամբ նայելէն հասկնալով թէ ինչ ըսել կ'ուզէր, ըսաւ. « Մայրիկ, գոհարներդ պահապանութեան սնտուկը չդնես: » Միւս աղջկունք ալ հասկցան իրենց մօրը միտքը, և շատ խնդացին: Թագուհի ըսաւ. « Այո, մայրիկս չորս պատուական գոհար ունի. մին աղամանդ է, մին յանկիկթ, միւսը կարկեհան, միւսն ալ մարգարիտ: ”

Ասոր վրայ Շուշան յարեց. « Մօրս մարգարիտն ես եմ, ես եմ անոր մարգարիտը. » և քիչ մը ետքը Թագուհիին

դառնալով, «Մենք ալ,» ըսաւ, «գոհար մը ունինք, որ աւելի մեծ և աւելի գեղեցիկ է և որադի կը նմանի: Այո, մեր մայրը մեր որդին է. որադ մը որ հոգի ունի:» Շուշան իր սիրուն աչուրները Մարիցա տիկնոջ վրայ դարձնելով ըսաւ այս խօսքերը:

Երջանիկ մայր, երջանիկ աղջիկներ: Այս երջանկութեան պատկերը կատարեալ էր: Զուարթ մայր մը կը նայէր իր երկու աղջիկներուն որ արդէն չափահաս էին, և որոնց երեսներուն վրայ սերը կը փայլէր:

ՄԵՆ ԻՇԽԱՆԸ

«Ինձի ես կ'իշխեմ,» կ'ըսէր խորիւտարով երիտասարդ մը, երբ բարեկամ մը կը ջանար համոզել զանի ետ կենալ այս ինչ գործէն: Բարեկամն անոր հարցուց. «Գիտե՞ս, ինչ ծանր պատասխանատուութիւն կ'առնես, ինձի ես կ'իշխեմ» ըսելով: «Պատասխանատուութիւն կ'առնեմ վրաս, այն պէն է,» ըսաւ երիտասարդը: «Ինք իրեն իշխել ուզողը,» կրկնեց բարեկամը, «լաւ տեղեակ ըլլալու է ամէն գործի, և գիտնալու է թէ շիտակ է գործը: Ապա աշխատելու է ամենէն աղէկ միջոցները գործածել որպէս զի կարենայ աղէկ վախճանի մը հասնիլ: Ամէն պատահար և արգելք զգուշութեամբ հաշուելու է, և ջանալու է միշտ որ ամէն բան օրինաւոր ըլլայ, ապա թէ ոչ գործը չի յաջողիր:» «Եւ ետքը,» ըսաւ երիտասարդը: Բարեկամը յառաջ տարաւ խօսքը ըսելով. «Կ'ըսես թէ, ինձի ես կ'իշխեմ»: Բայց միթէ խիղճդ մաքուր, սիրտդ բարի, բարքդ լաւ, կամքդ ուղիղ և դատողութիւնդ կիրթ է. եթէ այսպէս չէ, ոչ թէ դուն, այլ ասոնք կ'իշխեն քեզի:» «Խօսքդ շատ ճշմարիտ է,» ըսաւ երիտասարդը: «Որովհետեւ այս բաները կը պահանջուին,» ըսաւ բարեկամը, «եթէ ես քու տեղդ ըլլայի, ես ինձի իշխել չէի ուզեր, և եթէ ուզէի, անտարակոյս պիտի չյաջողէի: Սառուղ ուզեց ինք իրեն իշխել, և չկրցաւ. Հերովդէս ալ ուզեց, չկրցաւ, Յուդա ալ ուզեց, չկրցաւ. և ուրիշ ով որ ուզէ պիտի չկրցայ: Մենք մեզի իշխու ունինք գրքիստոս, անոր առաջնորդութեամբ գործելու ենք: Ան իշխելու է մեզի, և եթէ ան կ'իշխէ, ամէն բան կը յաջողի:» Երիտասարդը սկսաւ մեզմով և մտածելով ըսել սա խօսքերը. «Մենք մեզի իշխան ունինք գրքիստոս. ով որ անկեղծութեամբ անոր առաջնորդութեանը կը հետեւի, պիտի յաջողի:»



ԱՌՈՒՒ ՎՐՈՅ ԶՈՒՆՑ ՄԸ ԿՊՈՅՈՒՆ

ԼԱՐԻ ԼՈՒԱԼՈՒ ՕՐԸ

Փոքր աղջիկները տեսնելով որ Սօփի լաթ կը լուար, և լուացուած լաթերը չորցնելու համար կը փռէր, ուղեցին իրենց պէպէտէրէն ալ լաթերը լուալ: Լուսիային պէպէտէրէն անունն էր Մարթա, և Մաննիկին պէպէտէրէն անունը Բոզա:

Լուսիա ըսաւ. «Մարթային ձերմակեղենները և հանգերձները աղտոտած են, մաքուր գործնոց մ'անգամ մնացած չէ:»

Մաննիկ ալ ըսաւ. «Բոզա այս օր հարմիք պիտի երթայ, ուստի անոր լաթերը լուացուելու և մաքուրելու են:»

Աղջիկներն այս պէս խօսելով Սօփիին գացին: Սօփի տաշտին մէջ քիչ մը տաք ջուր լեցուց, և կաղնոյ մը չափ անառ տալով աղջկանց՝ զանոնք իր քովէն ճամբել ուղեց:

Մաննիկ ըսաւ. «Սյա անառը քիչ է. մեծ կակ կտոր մը կ'ուղեմ, ինչպէս է քու ձեռքիդը,» «Ո՛հ. դուն ալ միշտ շատ բան կուղես,» ըսաւ Սօփի, և աւելի մեծ կտոր մը անառ տալով, «Լաթ լուալու օրը գտաք, ահա անձրեւ կուգայ, ձեր լաթերն ալ չորնալու համար իմ լաթերուս պէս տանը մէջ փռուած պիտի մնան» ըսաւ:

«Ի՞նչ այն պէս ըլլայ, մենք դարձեալ կը զուարճանանք,» ըսաւ Լուսիան երկու աղջկունք իրենց պէպէտէրէնուն լաթերը տաշտին մէջ դնելով սկսան ջրով խաղալ: Զուրն անառով փրփրը ցուցին, ինչպէս կը փրփրի ծովին ջուրը շոգեհաւաց անիւներուն տակ, և սկսան լաթերը ոլորել և քամել, ինչպէս կ'ընէր Սօփի: Քիչ մը ետքը տեսան որ ջուրն իրենց հանգերձներուն վրայ

ցատկեցնելով թրջած էին զանոնք, որպէս թէ հանգերձներով տաշտին մէջ մտած ըլլային: Յետոյ Սօփիին գացին, և աթուռի մը ետին չուան կապել տուին, որպէս զի լուացուած լաթերը փռեն չորցնելու համար:

Վերի պատկերին մէջ այս աղջկանց լաթ փռելը ցուցուած է:

ՃՇՄԱՐՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կը պատմուի թէ երբ Պարսից կիրոս թագաւորին հարցուեցաւ թէ ամէնէն առաջ ինչ բան սորված էր, «Սմէնէն առաջ ճշմարտախօսութեան դասը սորվեցայ» պատասխանեց: Ճշմարտախօսութիւնը մարդուս միտքը զարգարող գեղեցիկ յատկութիւններէն մին է: Այս յատկութիւնն արդարեւ պատուական զարդ է, և ով որ զայն չունի, ինչ աստիճանէ որ ըլլայ, միշտ անարդ կ'երեւի իմաստուն մարդոց առջև:

ԳՈՐԾԵԼ ԵՒ ՀՈԳ ԸՆԵԼ

Եղեամբ զարկած և ապականած էր երկու պարտիզպաններու վաղահաս ուրաները: Այս պարտիզպաններէն մին եղեամբն երկու կամ երեք ամիս ետքը ըսաւ. միւսին, «Բա՛րէ, ի՞նչ անբախտ մարդ եմ ես: Գիտե՞ս բարեկամ, որ յորմէ հետէ եղեամբ պարտիզիս պտուղը զարնելով ապականեց, ես հոգընելէ զատ ուրիշ բան չըրի: Բայց կ'ըրեւի թէ քու պարտիզիդ բերքը յաջող և առատ եղաւ: Ի՞նչ էր ասոր պատճառը:» «Ես եղեամբն ետքը ցանցի զանոնք,» պատասխանեց միւսն իր պարտիզին բերքը ցուցնելով: «Ի՞նչ աղէկ բուսած են,» ըսաւ հոգընողը: «Մինչ դու կը տրամջէիր,» ըսաւ միւսը, «ես առանց ժամանակ կորսնցնելու նոքէն աշխատեցայ:»

ԲԱՑ ԳՈՒՌ

Բաց դուռ - մը կայ ո - բուն մէ - ջէն Խա - չին փայլու - նու - թիւ - նը

Տեւ - նել կու - տայ ա - մէն ա - տեն Փրկի - չին մեծ գը - թու - թիւ - նը :

Ո՛հ , գութ ան - պատ - մե - լի , ի - բաւ Այն դուռն ին - ծի հա - մար բա - ցաւ ,

ին - ծի , . . . ին - ծի , . . . ին - ծի՛ հա - մար բա - ցաւ :

2

Այն դուռն է ամենուն արձակ ,
 որ փրկութեան ծարուած են .
 Մեծ եւ պղտիկ , հարուստ , անանկ ,
 Մտնել հրաւիրուած են :
 Ո՛հ , գութ անպատմելի , եւ չն :

3

Շուտով այն բաց դռնէն մտնել
 Բլլայ մեր նպատակը .

Մեր Խաչն առնել , յարատեւել ,
 եւ ստանալ պսակը :
 Ո՛հ , գութ անպատմելի , եւ չն :

4

Ետքը Փրկչին հետ վեր ելլենք ,
 Ուր որ գացած է ինքը .
 եւ յաւիտեան տեսնենք , սիրենք ,
 Գովենք ըզնա երկիրքը :
 Ո՛հ , գութ անպատմելի , եւ չն :

1877



ՈՐ ՏԱՐԻՈՑ առաջին օրն եր -
 ջանկութեան , շնորհաւո -
 բութեան և ուրախութեան
 օր է : Նոր տարին երջանիկ
 տարի է , վասն զի Աստուծմէ
 կու գայ :
 Ամէնքս ալ գիտենք թէ
 Ի՞նչ հաճելի բան է մեր
 քսակին մէջ ստակ ունենալ՝
 զայն ըստ հաճոյս գործա -
 ծելու համար : Եթէ ձեր
 քսակներուն մէջ ստակ ունենաք , ան -
 շուշտ հաճութիւն կը զգաք զանոնք

ստէպ համբերով , և խորհելով այն բա -
 ներուն վրայ զորս պիտի գնէք այն
 ստակներով :

Նոր տարին ալ ըստ հաճոյս գործա -
 ծելու համար Աստուծմէ մեզի պարգև
 կը բերէ :

Պարգևը զոր նոր տարին կը բերէ՝
 ոչ թէ ստակ է , այլ նոր օրեր :
 Երեքհարիւր վաթսուց և հինգ օր :
 Այս օրերուն ամէնուն միանգամայն
 տէր պիտի չըլլանք . բայց , եթէ ապ -
 րինք , այս օրերուն հետ զհետէ տէր
 պիտի ըլլանք :

Արդ ամէն տղայ խորհելու է թէ
 ինչպէս պիտի գործածէ այս պար -
 գևը և ինչպէս պիտի անցունէ նոր
 տարւոյն օրերը : Եթէ գուք որոշէք

այն օրերն Աստուծոյ հաճելի կերպով
 անցունել , նոր տարւոյն բոլոր օրերը
 ձեզի համար երջանիկ օրեր պիտի ըլ -
 լան , և շնորհք գտնել պիտի տան ձե -
 զի Աստուծոյ և մարդոց առջև :

ՍՈՒՐԲ ԳԻՐԲ ԿԱՐԴԱՅՈՂ ՓՈՔՐԻԿ ՏՂԱՅՈՑ
 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ճամբու մը վրայ երեք անձինք
 յոգնած կը պտտին : Երբ քիչ մը մտ
 կուգան կը հասկցուի թէ կին են :
 Մին որ բաւական ծեր է՝ գաւազանի
 մը յեցած է , և , ինչպէս դէմքէն կը
 տեսնուի , վշտագին է : Միւս երկու
 կանայք մանկագոյն են քան զնա , և
 անոր երկու կողմէն երթալով կը ջա -
 նան զանի միջիմարել : Յանկարծ ե -
 րեքն ալ կը կենան , և ջերմ խօսակցու -
 թիւն մը կը սկսի անոնց մէջտեղ : Կե -
 րեւի թէ ծերագոյն կինը կ'ուզէ որ
 երկու մանկամարդ կանայք ետ դառ -
 նան , բայց անոնք որոշած են անոր ըն -
 կերանալ : Վերջապէս մին անոր թա -
 խանձանաց կը զիջանի , և արտասուօք
 և համբուրիւ հրաժարելով կը սկսի
 կամաց կամաց ետ դառնալ : Միւսը
 չուզելով իր ընկերոջ օրինակին հետե -
 ւիլ , կ'ըսէ ծերունի կնոջ . «Մի ստի -
 պեր զիս քենէ զատուիլ :» Երբագոյն
 կինը տեսնելով թէ իր խօսքերն ազ -
 դեցութիւն չեն ըներ , անոր ձեռ -
 քէն բռնելով կը սկսի իւր ճամբան յա -
 ռաջ տանիլ :

Ո՛վ էին այս երեք կանայք : Ման -
 կագոյններէն մին որու՝ հանին եղաւ :
 Այս պատմութիւնն ո՛ր կը գտնուի :

Բարձրաստիճան անմիտ մը կը նմա -
 նի մարդու մը որ կեցած է բարձր լե -
 ըրան մը գագաթը . ամէն մարդ փոքր
 կը թուի անոր , և ան փոքր կը թուի
 ամէն մարդու :

ԱՆԵՏԱՐԵՐՆԵՐՈՒՆ ԳԻՆԵՐԸ

Ամսական Աւետարեբրին գինն է փոս -
 թայի ծախքով տարին ¼ արծաթ մէ -
 ճիտիցէ կանխիկ , և մէկ թերթը 30 փա -
 ըա է :

Շաբաթական Աւետարեբրին գինն է
 փոսթայի ծախքով տարին 1 ½ արծաթ
 մէճիտիցէ կանխիկ :

Ամերիկայի միսիսնարաց ընկերութեան կողմէն
 Իմբազիր Ճ. Ք. ԿԻՒՆ
 Ֆիլաճանքըր Էօգուշու , Ամերիգան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՎՈՐ ՊՈՅՆՅԱՆ